

**Հայաստանի
Հանրապետության
Անշարժ գույքի շուկան
2018 թվականի մայիսին
(վերլուծություն)**

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2018 թվականի մայիսին (վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է հիմք ընդունելով 2018 թվականի մայիս ամսվա ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները, անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները և մասնագիտացված կազմակերպության կողմից անշարժ գույքի գների վերաբերյալ տրամադրված վերլուծական տվյալները:


1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2018 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13540 իրավունքների պետական գրանցման գործարքներ:

2009-2018 թվականների մայիս ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-1-ում.


Գծապատկեր 1.1-1




1.1.2 Հանրապետությունում 2018 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 33.9%, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 2.4%:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3



Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-1


	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
Երևան	4936	-6.9%	4594	6.9%	4298
Արագածոտն	606	37.3%	832	25.1%	665
Արարատ	885	25.9%	1114	3.0%	1082
Արմավիր	803	30.0%	1044	14.6%	911
Գեղարքունիք	655	63.4%	1070	14.9%	931
Լոռի	803	35.4%	1087	-15.7%	1289
Կոտայք	1446	27.9%	1849	21.6%	1520
Շիրակ	648	-23.1%	498	-9.0%	547
Սյունիք	540	11.7%	603	-5.0%	635
Վայոց Ձոր	311	5.8%	329	40.0%	235
Տավուշ	489	6.3%	520	1.4%	513
Հանրապետություն	12122	11.7%	13540	7.2%	12626

2018 թվականի մայիսին հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 7.2%-ով, իսկ 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 11.7 %-ով: Երևան քաղաքում 2018 թվականի մայիսին գրանցված գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 6.9 %-ով, իսկ 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ նվազել 6.9 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2018 թվականի մայիսին գրանցված գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 11.2%-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 17.2 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2018 թվականի մայիսին գրանցված գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 5.1 %-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 29.8 %-ով:

1.1.3 Հանրապետությունում 2018 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.7% գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.0 % օրինականացման գործարքների նկատմամբ:


Գծապատկեր 1.1-4-ում և Գծապատկեր 1.1-5-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ տեսակների.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ



Գծապատկեր 1.1-5

Հանրապետությունում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
1	Օտարում	4451	14.7%	5106	3.2%	4948
1ա	Առուվաճառք	3250	13.1%	3677	3.1%	3565
1բ	Նվիրատվություն	1187	-5.8%	1118	9.6%	1020
1գ	Փոխանակում	14	-21.4%	11	-26.7%	15
1դ	Օտարման այլ տեսակ	-	-	300	-13.8%	348
2	Վարձակալություն	737	12.2%	827	31.3%	630
3	Գրավադրում	2376	-5.6%	2244	4.4%	2149
4	Ժառանգություն	1802	20.5%	2171	8.9%	1993
5	Օրինականացում	112	17.0%	131	10.1%	119
6	Առաջնային գրանցում	1902	10.7%	2106	11.5%	1889
7	Պետգր. /վերագրանցում/	742	28.7%	955	6.3%	898
Ընդամենը գործարք		12122	11.7%	13540	7.2%	12626

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների:


Աղյուսակ 1.1-3

Գործարքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
	քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1 Օտարում	5106	37.7%	1791	39.0%	35.1%	1278	36.1%	25.0%	2037	37.7%	39.9%
1ա Առուվաճառք	3677	27.2%	1386	30.2%	37.7%	921	26.0%	25.0%	1370	25.3%	37.3%
1բ Նվիրատվություն	1118	8.3%	369	8.0%	33.0%	274	7.7%	24.5%	475	8.8%	42.5%
1գ Փոխանակում	11	0.1%	2	0.0%	18.2%	5	0.1%	45.5%	4	0.1%	36.4%
1դ Օտարման այլ տեսակ	300	2.2%	34	0.7%	11.3%	78	2.2%	26.0%	188	3.5%	62.7%
2 Վարձակալություն	827	6.1%	406	8.8%	49.1%	205	5.8%	24.8%	216	4.0%	26.1%
3 Գրավադրում	2244	16.6%	1173	25.5%	52.3%	638	18.0%	28.4%	433	8.0%	19.3%
4 Ժառանգություն	2171	16.0%	495	10.8%	22.8%	439	12.4%	20.2%	1237	22.9%	57.0%
5 Օրինականացում	131	1.0%	33	0.7%	25.2%	54	1.5%	41.2%	44	0.8%	33.6%
6 Առաջնային գրանցում	2106	15.6%	432	9.4%	20.5%	675	19.1%	32.1%	999	18.5%	47.4%
7 Պետգր. /վերագրանցում/	955	7.1%	264	5.7%	27.6%	248	7.0%	26.0%	443	8.2%	46.4%
Ընդամենը գործարք	13540	100.0%	4594	100.0%	33.9%	3537	100.0%	26.1%	5409	100.0%	39.9%


1.1.4 Հանրապետությունում 2018 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 36.0 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.6% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-6-ում և Գծապատկեր 1.1-7-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.1-6



Գծապատկեր 1.1-7



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
1	բնակարան	3942	-0.5%	3921	10.2%	3559
2	անհատական բնակելի տուն	2537	8.1%	2743	5.5%	2601
3	արտադրական նշ. շին	571	-38.2%	353	20.5%	293
4	հասարակական նշ. շին.	1249	0.1%	1250	12.1%	1115
5	ավտոտնակ	439	-8.4%	402	0.8%	399
6	հող	3384	43.9%	4871	4.6%	4659
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	1922	60.2%	3079	4.7%	2940
	Ընդամենը	12122	11.7%	13540	7.2%	12626

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Աղյուսակ 1.1-5


Գույքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր			
	քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	
1	բնակարան	3921	29.0%	2644	57.6%	67.4%	1165	32.9%	29.7%	112	2.1%	2.9%
2	անհատական բնակելի տուն	2743	20.3%	611	13.3%	22.3%	713	20.2%	26.0%	1419	26.2%	51.7%
3	արտադրական նշ. շին	353	2.6%	135	2.9%	38.2%	82	2.3%	23.2%	136	2.5%	38.5%
4	հասարակական նշ. շին.	1250	9.2%	723	15.7%	57.8%	395	11.2%	31.6%	132	2.4%	10.6%
5	ավտոտնակ	402	3.0%	283	6.2%	70.4%	95	2.7%	23.6%	24	0.4%	6.0%
6	հող	4871	36.0%	198	4.3%	4.1%	1087	30.7%	22.3%	3586	66.3%	73.6%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	3079	22.7%	20	0.4%	0.6%	423	12.0%	13.7%	2636	48.7%	85.6%
	Ընդամենը գործարք	13540	100.0%	4594	100.0%	33.9%	3537	100.0%	26.1%	5409	100.0%	39.9%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն՝ 19.2%, իսկ ցածրը 0.5% Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 1.2-1



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
Դավթաշեն	174	18.4%	206	-2.4%	211
Էրեբունի	371	-15.1%	315	-0.6%	317
Աջափնյակ	388	32.0%	512	35.4%	378
Ավան	319	-31.0%	220	0.9%	218
Արաբկիր	757	-16.2%	634	-2.3%	649
Կենտրոն	1016	-13.0%	884	4.1%	849
Մալաթիա-Սեբաստիա	498	-12.4%	436	-0.9%	440
Քանաքեռ-Զեյթուն	260	32.7%	345	2.4%	337
Շենգավիթ	569	-14.9%	484	7.3%	451
Նոր-Նորք	513	-4.7%	489	32.2%	370
Նորք-Մարաշ	33	42.4%	47	-13.0%	54
Նուբարաշեն	38	-42.1%	22	-8.3%	24
Երևան	4936	-6.9%	4594	6.9%	4298

1.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 39.0% գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.7% օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ:


Աղյուսակ 1.2-2

Հ/Հ	Գործարքի տեսակը	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
1	Օտարում	1926	-7.0%	1791	3.7%	1727
1ա	Առուվաճառք	1495	-7.3%	1386	6.6%	1300
1բ	Նվիրատվություն	425	-13.2%	369	3.4%	357
1գ	Փոխանակում	6	-66.7%	2	-80.0%	10
1դ	Օտարման այլ տեսակ	-	-	34	-43.3%	60
2	Վարձակալություն	297	36.7%	406	23.0%	330
3	Գրավադրում	1428	-17.9%	1173	1.2%	1159
4	Ժառանգություն	538	-8.0%	495	21.0%	409
5	Օրինականացում	40	-17.5%	33	-34.0%	50
6	Առաջնային գրանցում	346	24.9%	432	16.4%	371
7	Պետգր. /վերագրանցում/	361	-26.9%	264	4.8%	252
	Ընդամենը գործարք	4936	-6.9%	4594	6.9%	4298

1.2.3 Երևան քաղաքում 2018 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 57.6 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.9 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.2-3



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-3


Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
1	բնակարան	2818	-6.2%	2644	10.1%	2401
2	Անհատական բնակելի տուն	670	-8.8%	611	-5.4%	646
3	արտադրական նշ. շին	111	21.6%	135	32.4%	102
4	հասարակական նշ. շին.	731	-1.1%	723	11.7%	647
5	ավտոտնակ	347	-18.4%	283	-5.0%	298
6	հող	259	-23.6%	198	-2.9%	204
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	39	-48.7%	20	-31.0%	29
	Ընդամենը	4936	-6.9%	4594	6.9%	4298

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 37.1 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.1 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 1.3-1

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
1	Օտարում	2525	31.3%	3315	2.9%	3221
1ա	Առուվաճառք	1755	30.5%	2291	1.1%	2265
1բ	Նվիրատվություն	762	-1.7%	749	13.0%	663
1գ	Փոխանակում	8	12.5%	9	80.0%	5
1դ	Օտարման այլ տեսակ	-	-	266	-7.6%	288
2	Վարձակալություն	440	-4.3%	421	40.3%	300
3	Գրավադրում	948	13.0%	1071	8.2%	990
4	Ժառանգություն	1264	32.6%	1676	5.8%	1584
5	Օրինականացում	72	36.1%	98	42.0%	69
6	Առաջնային գրանցում	1556	7.6%	1674	10.3%	1518
7	Պետգր. /վերագրանցում/	381	81.4%	691	7.0%	646
	Ընդամենը գործարք	7186	24.5%	8946	7.4%	8328

1.3.2 Մարզերում 2018 թվականի մայիսին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 52.2 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.3 % ավտոտնակների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.3-4



Աղյուսակ 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
1	բնակարան	1124	13.6%	1277	10.3%	1158
2	անհատական բնակելի տուն	1867	14.2%	2132	9.1%	1955
3	արտադրական նշ. շին	460	-52.6%	218	14.1%	191
4	հասարակական նշ. շին.	518	1.7%	527	12.6%	468
5	ավտոտնակ	92	29.3%	119	17.8%	101
6	հող	3125	49.5%	4673	4.9%	4455
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	1883	62.5%	3059	5.1%	2911
	Ընդամենը	7186	24.5%	8946	7.4%	8328


2. ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2018 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 5106 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 37.7%-ը:



2009-2018 թվականների մայիս ամսվա անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում.

Գծապատկեր 2.1-1



2.1.2 Հանրապետությունում 2018 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 35.1%, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 2.4%:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.



Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.


	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
Երևան	1926	-7.0%	1791	3.7%	1727
Արագածոտն	182	91.8%	349	47.9%	236
Արարատ	367	25.9%	462	8.7%	425
Արմավիր	277	47.3%	408	27.5%	320
Գեղարքունիք	182	35.2%	246	-24.5%	326
Լոռի	301	56.8%	472	-30.2%	676
Կոտայք	558	33.0%	742	27.5%	582
Շիրակ	251	-21.9%	196	0.5%	195
Սյունիք	150	19.3%	179	-11.4%	202
Վայոց Ձոր	104	17.3%	122	19.6%	102
Տավուշ	153	-9.2%	139	-11.5%	157
Հանրապետություն	4451	14.7%	5106	3.2%	4948


2018 թվականի մայիսին հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 3.2 %-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 14.7 %-ով, Երևան քաղաքում՝ 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 3.7 %-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ նվազել՝ 7.0 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 5.6 %-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 27.4 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 1.3 %-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 33.8 %-ով:

2.1.3 Հանրապետությունում 2018 թվականի մայիսին օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 40.3 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.5% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 2.1-4






Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի մայիսին անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի:

Աղյուսակ 2.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	1688	33.1%	1146	64.0%	67.9%	490	38.3%	29.0%	52	2.6%	3.1%
2	անհատական բնակելի տուն	799	15.6%	201	11.2%	25.2%	202	15.8%	25.3%	396	19.4%	49.6%
3	արտադրական նշ. շին.	78	1.5%	19	1.1%	24.4%	21	1.6%	26.9%	38	1.9%	48.7%
4	հասարակական նշ. շին.	279	5.5%	154	8.6%	55.2%	94	7.4%	33.7%	31	1.5%	11.1%
5	ավտոտնակ	206	4.0%	149	8.3%	72.3%	48	3.8%	23.3%	9	0.4%	4.4%
6	հող	2056	40.3%	122	6.8%	5.9%	423	33.1%	20.6%	1511	74.2%	73.5%
6ա	ա/թ գյուղ նշ.հող	1308	25.6%	7	0.4%	0.5%	198	15.5%	15.1%	1103	54.1%	84.3%
	Ընդամենը գործարք	5106	100.0%	1791	100.0%	35.1%	1278	100.0%	25.0%	2037	100.0%	39.9%

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գործարքի տեսակների.

ՕՏԱՐՈՒՄ



Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոցձոր	Տավուշ	Մարզերը	Ընդամենը
Առուվաճառք	1386	227	377	333	124	231	555	135	128	86	95	2291	3677
Նվիրատվություն	369	110	81	68	67	68	174	60	45	35	41	749	1118
Փոխանակում	2	3	0	0	1	2	1	0	0	0	2	9	11
Օտարման այլ տեսակ	34	9	4	7	54	171	12	1	6	1	1	266	300
Ընդամենը	1791	349	462	408	246	472	742	196	179	122	139	3315	5106


3. ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2018 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 3677 գործարք :



2009-2018 թվականների մայիս ամսվա անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-1-ում.

Գծապատկեր 3.1-1



3.1.2 Հանրապետությունում 2018 թվականի մայիսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 37.7 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 2.3 %:

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.





Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.

	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
Երևան	1495	-7.3%	1386	6.6%	1300
Արագածոտն	124	83.1%	227	27.5%	178
Արարատ	276	36.6%	377	13.2%	333
Արմավիր	215	54.9%	333	33.2%	250
Գեղարքունիք	105	18.1%	124	14.8%	108
Լոռի	230	0.4%	231	-52.6%	487
Կոտայք	405	37.0%	555	21.4%	457
Շիրակ	154	-12.3%	135	7.1%	126
Սյունիք	101	26.7%	128	-11.7%	145
Վայոց Ձոր	64	34.4%	86	-7.5%	93
Տավուշ	81	17.3%	95	8.0%	88
Հանրապետություն	3250	13.1%	3677	3.1%	3565

2018 թվականի մայիսին հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 3.1 %-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 13.1 %-ով, Երևան քաղաքում՝ 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 6.6 %-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ նվազել 7.3 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 13.6 %-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 30.8 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 2018 թվականի ապրիլի համեմատ նվազել է 5.8%-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ աճել՝ 30.4 %-ով:

3.1.3 Հանրապետությունում 2018 թվականի մայիսին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 40.1% գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.7% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-4-ում և Գծապատկեր 3.1-5-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների:



Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ


Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
1	բնակարան	1223	3.6%	1267	6.6%	1189
2	անհատական բնակելի տուն	409	19.3%	488	8.9%	448
3	արտադրական նշ. շին	38	60.5%	61	13.0%	54
4	հասարակական նշ. շին.	223	-9.0%	203	4.6%	194
5	ավտոտնակ	236	-22.5%	183	13.7%	161
6	հող	1121	31.6%	1475	-2.9%	1519
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	630	30.8%	824	-5.9%	876
	Ընդամենը	3250	13.1%	3677	3.1%	3565

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի մայիսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 20.3%, իսկ առավել ցածրը՝ 0.4% Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.2-1



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
Դավթաշեն	59	18.6%	70	-11.4%	79
Էրեբունի	70	38.6%	97	16.9%	83
Աջափնյակ	114	19.3%	136	15.3%	118
Ավան	129	-38.8%	79	16.2%	68
Արաբկիր	250	-26.0%	185	-14.7%	217
Կենտրոն	311	-11.3%	276	7.4%	257
Մալաթիա-Սեբաստիա	144	-9.7%	130	3.2%	126
Քանաքեռ-Զեյթուն	64	79.7%	115	21.1%	95
Շենգավիթ	157	-14.6%	134	20.7%	111
Նոր-Նորք	175	-15.4%	148	18.4%	125
Նորք-Մարաշ	7	42.9%	10	-28.6%	14
Նուբարաշեն	15	-60.0%	6	-14.3%	7
Երևան	1495	-7.3%	1386	6.6%	1300

3.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի մայիսին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 62.4% գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.3 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-2


Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
1	բնակարան	895	-3.4%	865	4.7%	826
2	անհատակ անբնակելի տուն	128	12.5%	144	8.3%	133
3	արտադրական նշ. շին	15	20.0%	18	0.0%	18
4	հասարակական նշ. շին.	134	-10.4%	120	-6.3%	128
5	ավտոտնակ	209	-37.8%	130	7.4%	121
6	հող	114	-4.4%	109	47.3%	74
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	3	66.7%	5	-50.0%	10
Ընդամենը		1495	-7.3%	1386	6.6%	1300

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2018 թվականի մայիսին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 59.6% գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.9% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.3-1


Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
1	բնակարան	328	22.6%	402	10.7%	363
2	անհատական բնակելի տուն	281	22.4%	344	9.2%	315
3	արտադրական նշ. շին	23	87.0%	43	19.4%	36
4	հասարակական նշ. շին.	89	-6.7%	83	25.8%	66
5	ավտոտնակ	27	96.3%	53	32.5%	40
6	հող	1007	35.7%	1366	-5.5%	1445
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	627	30.6%	819	-5.4%	866
Ընդամենը		1755	30.5%	2291	1.1%	2265

3.4 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.4.1 Հանրապետությունում 2018 թվականի մայիսին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1267 գործարք: 2018 թվականի մայիսին հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 6.6%-ով, 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 3.6 %-ով

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի.

Գծապատկեր 3.4-1



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2018 թվականի ապրիլ և 2017 թվականի մայիս ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 3.4-1

	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
Երևան	895	-3.4%	865	4.7%	826
Արագածոտն	7	85.7%	13	30.0%	10
Արարատ	28	60.7%	45	2.3 անգամ	20
Արմավիր	32	15.6%	37	-19.6%	46
Գեղարքունիք	20	-15.0%	17	-26.1%	23
Լոռի	64	14.1%	73	15.9%	63
Կոտայք	91	16.5%	106	20.5%	88
Շիրակ	42	2.4%	43	-24.6%	57
Սյունիք	22	86.4%	41	17.1%	35
Վայոցձոր	5	2.8 անգամ	14	75.0%	8
Տավուշ	17	-23.5%	13	0.0%	13
Հանրապետություն	1223	3.6%	1267	6.6%	1189

3.4.2 Երևան քաղաքում 2018 թվականի մայիսին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 865 գործարք, 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 4.7%-ով, իսկ 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ նվազել 3.4%-ով:

Երևան քաղաքում 2018 թվականի մայիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 19.3%, իսկ առավել ցածրը՝ 0.2% Նորք-Մարաշ վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.



Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով՝ ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների.

Աղյուսակ 3.4-2

Վարչական շրջան	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
Կենտրոն միջին	450000	14.4%	515000	1.5%	507200
Կենտրոն 1գոտի		N/A	633200	0.4%	630900
Կենտրոն 2 գոտի		N/A	476700	0.3%	475300
Կենտրոն 3 գոտի		N/A	429700	-0.6%	432500
Կենտրոն 4 գոտի		N/A	N/A	N/A	370300
Կենտրոն 5 գոտի		N/A	339200	0.3%	338100
Արաբկիր միջին	340000	6.9%	363500	0.9%	360100
Արաբկիր 3գոտի		N/A	428000	0.4%	426100
Արաբկիր 4գոտի		N/A	375300	-0.2%	376100

Արաբկիր 5գոտի		N/A	334200	0.7%	332000
Արաբկիր 6գոտի		N/A	N/A	N/A	224500
Քանաքեռ-Զեյթուն միջին	268000	2.2%	274000	0.1%	273700
Քանաքեռ-Զեյթուն 4գոտի		N/A	330000	1.2%	326000
Քանաքեռ-Զեյթուն 5գոտի		N/A	311200	0.0%	311100
Քանաքեռ-Զեյթուն 6գոտի		N/A	292000	1.0%	289100
Քանաքեռ-Զեյթուն 7գոտի		N/A	220100	1.0%	218000
Նոր-Նորք միջին	230000	5.2%	241900	0.0%	241900
Նոր-Նորք 6 գոտի		N/A	260800	-0.2%	261200
Նոր-Նորք 7 գոտի		N/A	221200	-0.2%	221600
Էրեբունի միջին	237000	6.5%	252500	1.4%	249000
Էրեբունի 5 գոտի		N/A	291650	0.6%	290000
Էրեբունի 6 գոտի		N/A	266100	2.0%	261000
Էրեբունի 7 գոտի		N/A	N/A	N/A	236800
Էրեբունի 8 գոտի		N/A	201000	0.5%	200000
Շենգավիթ միջին	240000	5.2%	252400	0.1%	252100
Շենգավիթ 5 գոտի		N/A	274500	0.4%	273300
Շենգավիթ 6 գոտի		N/A	264800	0.5%	263400
Շենգավիթ 7 գոտի		N/A	236900	-0.2%	237400
Շենգավիթ 8 գոտի		N/A	200000	0.0%	200000
Դավթաշեն միջին	250000	13.4%	283400	1.4%	279600
Դավթաշեն 7 գոտի		N/A	283400	1.4%	279600
Աջափնյակ միջին	226250	10.5%	250100	0.3%	249300
Աջափնյակ 4 գոտի		N/A	273000	1.1%	270000
Աջափնյակ 6 գոտի		N/A	271400	-0.8%	273500
Աջափնյակ 7 գոտի		N/A	225000	0.9%	223000
Աջափնյակ 8 գոտի		N/A	N/A	N/A	234050
Մալաթիա-Սեբաստիա միջին	230000	3.5%	238000	0.0%	237900
Մալաթիա –Սեբաստիա 6 գոտի		N/A	290000	1.4%	286000
Մալաթիա –Սեբաստիա 7 գոտի		N/A	235000	0.4%	234000
Մալաթիա –Սեբաստիա 8 գոտի		N/A	200000	0.0%	200000
Ավան միջին	247600	3.7%	256700	0.5%	255500
Ավան 6 գոտի		N/A	208000	0.0%	208000
Ավան 7 գոտի		N/A	262100	1.5%	258300
Նուբարաշեն միջին	156000	7.8%	168100	3.0%	163200
Նուբարաշեն 9		N/A	168100	3.0%	163200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2018 թվականի ապրիլի համեմատ՝ աճել են 0.9%-ով, իսկ 2017 թվականի մայիսի համեմատ՝ աճել 7.7%-ով:

Ծանոթություն

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 17.04.2003թ. N470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման գոտիների:

*Մալաթիա-Սեբաստիա համայնքի 6-րդ գոտում ընդգրկված է Ծիծեռնակաբերդի խճուղին

*Ավան համայնքի 7-րդ գոտում ընդգրկված է Ծարավ Աղբյուրի փողոցը

*Աջափնյակ համայնքի 8-րդ գոտում ընդգրկված է Վահագնի թաղամասը

Վերոնշյալ փողոցներն ու թաղամասերն էական ազդեցություն են թողնում տվյալ գոտում ձևավորվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական գների վրա:


*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել

3.4.3 2018 թվականի մայիսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 402 բնակարան, ընդ որում՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 7.2%-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի մայիսին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 10.7%-ով, իսկ 2017 թվականի մայիս ամսվա համեմատ՝ 22.6 %-ով:

Գծապատկեր 3.4-3-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.4-3



Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված են 2018 թվականի մայիսին մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ² մակերեսի հաշվարկով.


Մարզը	Քաղաքը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
Արագածոտն	Աշտարակ	112700	1.9%	110600
	Ապարան	86400	1.3%	85300
	Թալին	70500	1.1%	69700
Արարատ	Արտաշատ	101200	-0.2%	101400
	Մասիս	100200	1.2%	99000
	Վեդի	93100	-2.4%	95400
	Արարատ	80000	-4.9%	84100
Արմավիր	Վաղարշապատ	120100	-0.9%	121200
	Արմավիր	90400	-0.4%	90800
	Մեծամոր	64050	-1.8%	65200
Գեղարքունիք	Սևան	85500	1.1%	84550
	Գավառ	55600	2.0%	54500
	Մարտունի	121000	4.3%	116000
	Վարդենիս	58000	3.9%	55800
	Ճամբարակ	39700	0.3%	39600
Լոռի	Վանաձոր	79200	1.8%	77800
	Ստեփանավան	67600	0.0%	67600
	Սպիտակ	90500	-1.3%	91700
	Ալավերդի	49200	-2.6%	50500
	Տաշիր	60300	1.3%	59500
	Թումանյան	22700	0.0%	22700
	Շամլուղ	28300	-0.4%	28400
	Ախթալա	33400	-1.8%	34000
Կոտայք	Աբովյան	155200	0.3%	154800
	Նոր Հաճն	126200	1.0%	125000
	Բյուրեղավան	97100	1.1%	96000
	Եղվարդ	121500	2.2%	118900
	Հրազդան	57700	-1.4%	58500
	Ծաղկաձոր	285400	0.8%	283100
	Չարենցավան	69500	-0.9%	70100
Շիրակ	Գյումրի	92100	1.4%	90800
	Արթիկ	66050	-3.1%	68150
	Մարալիկ	51700	0.2%	51600
Սյունիք	Գորիս	135150	2.3%	132050
	Կապան	105400	1.2%	104100
	Սիսիան	84000	2.6%	81900
	Մեղրի	101800	-2.5%	104400
	Քաջարան	100200	0.0%	100200
	Դաստակերտ	21400	1.9%	21000
Վայոց ձոր	Վայք	86000	0.0%	86000
	Եղեգնաձոր	120000	1.7%	118050
	Զերմուկ	109100	5.1%	103800
Տավուշ	Դիլիջան	104500	-2.2%	100680
	Իջևան	115700	0.9%	114700
	Բերդ	95500	-0.6%	96100
	Նոյեմբերյան	56000	0.9%	55500
	Այրում	58200	-0.9%	58700

	2017 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի մայիս	փոփոխումը	2018 թվականի ապրիլ
Երևան	114	-4.4%	109	47.3%	74
Արագածոտն	94	95.7%	184	40.5%	131
Արարատ	193	34.7%	260	10.2%	236
Արմավիր	137	64.2%	225	46.1%	154
Գեղարքունիք	53	34.0%	71	24.6%	57
Լոռի	120	-38.3%	74	-79.4%	360
Կոտայք	215	51.6%	326	16.4%	280
Շիրակ	55	0.0%	55	2.2 անգամ	25
Սյունիք	51	-3.9%	49	-39.5%	81
Վայոցձոր	49	18.4%	58	-17.1%	70
Տավուշ	40	60.0%	64	25.5%	51
Հանրապետություն	1121	31.6%	1475	-2.9%	1519

3.5.2 Երևան քաղաքում 2018 թվականի մայիսին իրականացվել է հողերի առուվաճառքի 109 գործարք: 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ աճել է 47.3 %-ով, իսկ 2017 թվականի մայիս ամսվա համեմատ նվազել՝ 4.4 %-ով:

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում հողի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.5-2



2018 թվականի մայիսին Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Աջափնյակ ` 16.5 %, իսկ առավել ցածրը` 0.9 %` Նուբարաշեն վարչական շրջաններում:

2018 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացվել է հողերի առուվաճառքի 109 գործարք` 11.92 հա ընդհանուր մակերեսով, որոնք ըստ նպատակային նշանակության բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող` 5 միավոր (0.44 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող` 64 միավոր (9.49 հա),
- հասարակական կառուցապատման հող` 37 միավոր (1.92 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող` 3 միավոր (0.07 հա) մակերեսով:

Երևան քաղաքում վաճառված հողերի քանակի 35.8 %-ը կամ 39 միավոր` 7.81 հա ընդհանուր մակերեսով, հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 79.7 %-ը կամ 70 միավոր (4.11 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող:

Աղյուսակ 3.7-2-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին Երևան քաղաքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն` ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Աղյուսակ 3.7-2

Վարչական շրջաններ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	1	0.05	0	0.00	0	0.00	0	0.00	12	0.91	0	0.00
Էրեբունի	0	0.00	0	0.00	1	0.003	2	0.01	0	0.00	0	0.00	1	0.06	2	0.06
Աջափնյակ	0	0.00	0	0.00	4	0.03	4	0.04	0	0.00	0	0.00	2	0.09	8	0.66
Ավան	0	0.00	0	0.00	1	0.02	3	0.14	0	0.00	0	0.00	1	0.02	4	0.15
Արաբկիր	0	0.00	0	0.00	2	0.21	1	0.05	0	0.00	0	0.00	4	0.16	0	0.00
Կենտրոն	0	0.00	1	0.02	7	0.02	2	0.02	0	0.00	0	0.00	5	0.43	2	0.29
Մալաթիա-Սեբաստիա	0	0.00	0	0.00	1	6.57	1	0.04	4	0.29	0	0.00	6	0.21	3	0.12
Քանաքեռ-Զեյթուն	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.01	0	0.00	0	0.00	2	0.06	0	0.00
Շենգավիթ	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.01	1	0.15	1	0.01	2	0.09	0	0.00
Նոր-Նորք	0	0.00	0	0.00	2	0.05	2	0.31	0	0.00	1	0.04	5	0.21	1	0.02
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	2	0.20	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.07	0	0.00
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.03	0	0.00
Ընդամենը	0	0.00	1	0.02	21	7.15	17	0.63	5	0.44	2	0.05	43	2.34	20	1.30


Աղյուսակ 3.7-3-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Վարչական շրջաններ	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. Նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					Բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								Բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.05	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.05
Էրեբունի	1	0.003	0	0.00	1	0.003	0	0.00	2	0.01	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.01
Աջափնյակ	4	0.03	0	0.00	4	0.03	0	0.00	4	0.04	0	0.00	0	0.00	0	0.00	4	0.04
Ավան	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	3	0.14	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.14
Արաբկիր	3	0.26	0	0.00	2	0.21	1	0.05	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Կենտրոն	10	0.06	1	0.02	7	0.02	2	0.02	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Մալաթիա-Սեբաստիա	1	6.57	0	0.00	1	6.57	0	0.00	1	0.04	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.04
Քանաքեռ-Զեյթուն	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Շենգավիթ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.01	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.01
Նոր-Նորք	1	0.05	0	0.00	0	0.00	1	0.05	3	0.31	0	0.00	0	0.00	2	0.05	1	0.26
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.20	0	0.00	0	0.00	2	0.20	0	0.00
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Ընդամենը	22	7.00	1	0.02	16	6.85	5	0.13	17	0.80	0	0.00	0	0.00	4	0.25	13	0.55

3.5.3 Մարզերում 2018 թվականի մայիսին իրականացվել է հողերի առուվաճառքի 1366 գործարք, ընդ որում նշված առուվաճառքի գործարքների 77.7%-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի մայիսին մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2018 թվականի ապրիլի համեմատ նվազել է 5.5%-ով, իսկ 2017 թվականի մայիս ամսվա համեմատ աճել՝ 35.7%-ով:

Գծապատկեր 3.5-3-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին մարզերում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.



Մարզերում 2018 թվականի մայիսին հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Կոտայքի՝ 23.9 %, իսկ առավել ցածրը՝ 3.6% Սյունիքի մարզերում:

2018 թվականի մայիսին մարզերում իրականացվել է հողերի առուվաճառքի 1366 գործարք՝ 802.69 հա ընդհանուր մակերեսով, որոնք ըստ նպատակային նշանակության բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 819 միավոր (749.61 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 374 միավոր (30.77 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 138 միավոր (6.30 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 32 միավոր (10.78 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 3 միավոր (5.23 հա) մակերեսով:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 241.88 հա, որից 235.19 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Մարզերում վաճառված հողերի քանակի 31.9 %-ը կամ 470 միավորը (198.26 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 68.1 %-ը կամ 1005 միավորը (616.35 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող: 2018 թվականի մայիսին մարզերում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 12 գործարք (2.30 հա), այդ թվում կառուցապատման իրավունքի վաճառքի:

Աղյուսակ 3.7-4-ում ներկայացված է 2018 թվականի մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի՝ բացառությամբ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

Աղյուսակ 3.7-4

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					Բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						Բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Արագածոտն	49	29.06	1	0.01	6	0.08	10	0.26	98	111.77	0	0.00	20	2.10	0	0.00
Արարատ	28	46.90	4	0.31	60	5.38	5	0.09	113	63.55	2	0.04	48	4.10	0	0.00
